ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

«ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

(Տպավորություններ Սովետական Հայաստանի 30-ամյակին նվիրված ժողովրդական տնտեսության ցուցահանդեսից)

ազմաթիվ անգամներ մենք առիթ ենք ունեցել կարդալ այն փայլուն թվերի ու փաստերի մասին, որոնք բնութագրում են Սովետական Հայաստանի նվաճումներն ու աննախընթաց վերելքը նրա զարգացման երեսուն տարիների ընթացքում։ Մենք անձամբ եղել ենք այդ հրաշագործ վերափոխումների կենդանի վկաները։ Օրը-օրին մենք ականատես ենք եղել, թե ինչպիսի՛ հոյակապ թափով է կառուցվում ու վերաշինվում մեր սիրելի Հայրենիքը, թե շինարարական ի՛նչ արտակարգ տեմպով է լցված նրա առօրյան։ Եվ, սակայն, երբ մտնում ես այս զարմանահրաշ ցուցահանդեսի դռներից ներս, մի վայրկյան չես հավատում աչքերիդ. մի՞թե այս ամենը պատրաստված է Հայաստանում, հայ մարդու ձեռքով։ Չէ՞ որ դեռ երեկ մենք միայն երազել կարող էինք այն մասին, որ Հայաստանի մայրաքաղաքում ունենանք առաջնակարգ դազգահներով, հաստոցներով և այլ սարքավորումներով կահավորված մի գործարան։ Եվ հպարտության ինչպիսի՜ զգացումով, տաս տարի շարունակ, մենք յուրաքանչյուր եկվորի ցույց էինք տալիս Հայաստանի արդյունաբերության առաջնեկին՝ Զերժինսկու անվան մեխանիկական գործարանը, որն այն ժամանակ, փաստորեն, լավ կահավորված մեխանիկական մի արհեստանոց էր միայն։

Իսկ այսո՞ր։ Ահա այս ցուցահանդեսի առաջին դահլիճի հենց կենտրոնում դրված են երեք խոշոր, ամենաբարդ հորինվածքի հաստոցներ, որոնք մետաղամշակման գիտարվեստի վերջին խոսքն են ներկայացնում, և... յուրաքանչյուրի վրա պղնձյա փոքրիկ հայատառ դրոշմանիշ կա — «Երևանի Զերժինսկու անվան դազգահաշինական գործարան»։ Տասնհինգ տարի անց, Հայաստանի առաջին մեխանիկական արհեստանոցը դարձել է դազգահաշինական հսկա մի գործարան, որը արտադրում է հարյուրավոր ամենաառաջնակարգ դազգահներ ու հաստոցներ, որոնցով այսօր աշխատում են Հայաստանի բազմաթիվ շրջաններում ու քաղաքներում կառուցված տասնյակ նոր մեխանիկական գործարաններն ու արհեստանոցները։

— Զերժինսկու անվան գործարանը,— ասում է մեզ ուղեկցող թանգարանի դիրեկտոր Ղաֆադարյանը,— բոլորովին վերջերս պատրաստել է հշտագույն խառատման պտուտակային նոր տեսակի հաստոց մեքենա, որով գործիքներ են պատրաստվում ամենաստույգ ճշտությամբ։ Սովետական Միության մեջ սա այս տիպի առաջին դազգահն է, որն այժմ մասսայական ձևով արտադրելու է մեր գործարանը։

Այդ բարդ ու գեղեցիկ, կատարելագործված խառատելու պտուտակային հաստոցի կողքին դրված է նույնքան փայլուն ու գեղեցիկ մի ուրիշ խոշոր հաստոց։ Դա գործարանի արտադրանքի երկրորդ նմուշն է, նրա երկրորդ պարծանքը՝ քար ֆրեզելու (տաշելու) հաստոցը։ Մեքենան ամբողջովին նախագծված ու պատրաստված է Հայաստանի

կոնստրուկտորների (հորինողների) կողմից, և առայժմ միայն Երևանն է արտադրում այդ տեսակի հաստոցներ, տասնապատիկ անգամ թեթևացնելով մեր շինարարների աշխատանքը։ Հաստոցը մեծ արագությամբ տաշում ու պատրաստում է սրբատաշ քառակուսի քարեր, սկսած տուֆից մինչև ամենակարծր քարերի տեսակները։ Հաստոցի կիրառումը ո՛չ միայն թեթևացնում է քարտաշների ծանր աշխատանքը, այլև մեծ չափով արագացնում շինարարության ընթացքը։ Եթե նկատի ունենանք, որ Հայաստանը քարի ու քարային կառուցումների երկիր է, ապա հասկանալի կլինի Հայաստանի հորինողների այդ գյուտի ամբողջ կարևորությունը, Հայաստանի, և ո՛չ միայն Հայաստանի շինարարության արագացման գործում։ Կոնստրուկտորների այդ նույն կոլեկտիվն արդեն ավարտել է քարամշակման մի այլ հաստոցի հորինվածքը՝ քարի վրա նուրբ փորագրման հաստոցը։ Այդ մեքենայի փորձնական օրինակի գործարկումը տվել է փայլուն արդյունքներ, և շուտով կսկսվի այդ հաստոցի մասսայական արտադրությունը։

Երկար ժամանակ չենք կարողանում կտրվել Ջերժինսկու անվան գործարանի գեղեցիկ արտադրանքների տասնյակ այլ նմուշներից, մեկը մյուսից ավելի գեղեցիկ ու տպավորիչ։ Այս բոլոր ցուցադրված նմուշներն ամենապերճախոս ապացույցն են այն բանի, թե ինչպիսի՛ խոշոր և առաջնակարգ արդյունաբերական ձեռնարկություն է դառել Հայաստանի ինդուստրիայի այդ առաջնեկը։

Վեհափառը ցուցահանդեսում՝ Վահան Սրբազանի ընկերակցությամբ։
Բացատրում է Պետական Պատմական թանգարանի դիրեկտոր
Կ. Ղաֆանդարյանը

Սակայն ցուցահանդեսի մյուս անկյուններն ավելի անսպասելի ու հիասքանչ պատկերներ են բացում մեր առաջ։

Ահա դահլիճի աջ անկյունում մինչև առաստաղը վերասլաց բուրգի նման բարձրանում են տարբեր տրամաչափերի ու մեծության ավտոդողեր, որոնց վրա նույն հայատառ դրոշմանիշն է՝ «Երևանի ավտոդողերի գործարան»։ Գործարանն արտադրում է ավտոդողերի բոլոր տեսակները բոլոր այն ավտոմեքենաների համար, որոնք գործածու-

թյան մեջ են գտնվում մեր Հայրենիքում, սկսած փոքր մարդատար մեքենաներից մինչև ծանր հինգ տոննանոց բեռնատար մեքենաները, և այնպիսի քանակությամբ, որ բավարարում է ո՛չ միայն Հայաստանի ավտոդողերի ամբողջ պահանջը, այլև մատակարարում է ավտոդողեր Անդրկովկասի և Միջին Ասիայի մյուս ռեսպուբլիկաներին։ Ավտոդողերի կողքին ցուցադրված են Հայաստանի ռետինի արդյունաբերության տասնյակ այլ նմուշներ՝ ռետինե տարբեր տեսակի խողովակներ, կոշիկներ, կրկնակոշիկներ, մանկական խաղագնդակներ և այլ խաղալիքներ, արդյունաբերական զանազան ռետինե սարքավորումներ։ Եվ այդ ամենը՝ արտադրվում և վերամշակվում է Հայաստանում, սկսած կաուչուկի արտադրությունից մինչև ռետինե խողովակները։

Ռետինի արդյունաբերության նմուշների բաժնի կողքին, կարծես նրա շարունակությունը կազմելով՝ ցուցադրված են արդյունաբերության մի այլ ճյուղի՝ կաբելային արտադրության նմուշները։ Սա Հայաստանի արդյունաբերության ամենաերիտասարդ ճյուղերից մեկն է, վերջին հնգամյակի ծնունդը, և որպես այդպիսին էլ կրում է իր վրա այդ հնգամյակի բնորոշ գծերը՝ մեծ է իր չափերով և առաջնակարգ՝ իր տեխնիկայով։ Այստեղ ցուցադրված են կաբելի գործարանի արտադրանքի երեսուներկու նմուշ՝ սկսած ամենանուրբ պղնձյա լարերից, կենցաղային պետքերի համար ամենաանհրաժեշտ սենյակային էլեկտրալարերից, մինչև ամենաբարդ տեսակի արդյունաբերական հաստ, բազմաջիղ լարեր։ Շուտով Երևանի Կաբելի գործարանը յուրացնելու է նաև բարդ տեսակի բազմաջիղ հեռախոսային լարերի արտադրությունը, որից հետո ավարտված կլինի ամբողջ բոլորաշրջանակը, չի լինի լարային տեսակի որևէ արտադրանք, որը չթողարկի Երևանի Կաբելի գործարանը։

Այս մեծ գործարանը նշանակալից է նաև մի ուրիշ առանձնահատկությամբ։ Մինչև վերջին հնգամյակը, Հայաստանը, որը միշտ հայտնի է եղել իր պղնձարդյունաբերությամբ, արտադրում էր և արտահանում միայն սև պղինձ, պղնձի կիսաֆաբրիկատ։ Վերջին հնգամյակում Ալավերդում կառուցված պղնձի էլեկտրոլիզի (էլեկտրոլուծական) գործարանի շնորհիվ այժմ Հայաստանն արտադրում է արդյունաբերական զտված պատրաստի պղինձ, որը, հիմնականում, արդեն ոչ թե արտահանվում է իբրև հումք, այլ հենց Հայաստանում էլ, Երևանի Կաբելի գործարանում վերամշակվում է՝ դառնալով պատրաստի արտադրանք։ Այս երկու խոշոր նվաճումների մասին են պատմում Կաբելի գործարանի և պղնձարդյունաբերության ցուցատախտակները, որոնք տեղավորված են ցուցահանդեսի այդ նույն դահլիճում։ Կաբելի գործարանի արտադրանքը հաշվվում է միլիոնավոր մետրերով։ Ցուցագիծը ցույց է տալիս, որ 1946 թվի համեմատությամբ, լարերի արտադրանքն ավելացել է համարյա երեսուն անգամ։

Ցուցահանդեսի այս առաջին ցուցասրահը կարծես ամփոփում է այն նվաճումները, որ ձեռք են բերվել մեր ռեսպուբլիկայում վերջին հնգամյակի ընթացքում։ Կաբելի գործարանի ցուցատախտակի կողքին տեղավորված են Հայաստանի մի քանի այլ նոր գործարանների արտադրանքները՝ Երևանի Փոքր տուրբինների (ջրանիվների) գործարանի, Կոմպրեսորների (ճնշիչ մեքենաների) գործարանի, Ճշգրիտ էլեկտրաչափիչ գործիքների գործարանի, Ավտոդետալ (ավտոյի մասեր պատրաստող) գործարանի, Ժամացույցի գործարանի և Լենինականի Հեծանիվների գործարանի արտադրանքները։ Հեշտ է այս ամենը թվարկել, սակայն դժվար է պատկերացնել, թե ինչպես մի հնգամյակի ընթացքում, Հայաստանի պես փոքրիկ մի երկրում, կարող են նման զարմանահրաշ փոփոխություններ կատարվել։ Չէ՞ որ պետք էր ո՛չ միայն կառուցել այդքան գործարանային շենքեր, դրանք սարքավորել առաջնակարգ մեքենաներով, այլև պատրաստել ամենակարևորը՝ ճարտարարվեստի բարձր տեխնիկային տիրապետած որակյալ մասնագետ բանվորներ։ Սակայն իրականությունը, որ այստեղ մարմնավորված է գեղեցիկ մեքենայացված արտադրանքի մեջ, գալիս է ապացուցելու, որ այդ հրաշքը կատարվել է։

Ահա Փոքր տուրբինների գործարանի արտադրանքը՝ հորիզոնական պտուտակաձև տուրբինը. սա իր ծավալներով բավական մեծ և բարդ մի մեքենա է, սակայն, ինչպես բացատրում է մեզ դիրեկտոր Ղաֆադարյանը, դա գործարանի արտադրանքի մի մասն է միայն, այն, որ իր խոշոր չափերով հանդերձ կարող էր տեղավորվել ցուցասրահում. այդ գործարանի արտադրանքի մյուս տեսակները այնքան մեծ են, որ տեղավորվել չէին կարող և ցուցադրված են նրանց լուսանկարները միայն։ Ահա Կոմպրեսորների գործարանի արտադրանքը՝ երկաստիճան մղող ջրհանը, կենտրոնախույս մղիչը, բարդ կոմպրեսորների մի քանի տեսակներ, սկսած ամենախոշոր չափերի կոմպրեսորներից մինչև ձեռքի կոմպրեսորը, որի մասին մեծ պարծանքով են խոսում նրա կառուցողները.

ձեռքով գործադրվող այդ փոքրիկ մեքենան մինչև երեսուն մթնոլորտային ճնշում է առաջացնում։

Ահա Լենինականի Հեծանիվների գործարանի արտադրանքը, փոքրիկ, մանկական հեծանիվներից մինչև գեղեցիկ նիկելից փայլող երկանիվ կատարելագործված հեծանիվները, և բոլորի վրա նույն պղնձյա փոքրիկ հայատառ դրոշմանիշը, որ համառորեն պնդում է մի փաստի մասին՝ այս ամենը «պատրաստված է Հայաստանում»։

Ահա Ավտոդետալ գործարանի ցուցատախտակը։ Այստեղ ցուցադրված են 40-ից ավելի նմուշ. ավտոմեքենաների զանազան պահեստային մասեր են դրանք, որ յուրացված են ու արտադրվում են Հայաստանում, բավարարելով ո՛չ միայն ռեսպուբլիկայի ավտոմեքենաների պահեստային մասերի ամբողջ պահանջը, այլև մատակարարելով այդպիսի մասերով նաև հարևան ռեսպուբլիկաներին։ Այդ գործարանի նշանակության և նրա հեռանկարների մասին է խոսում այն կարևոր փաստը, որ ներկայումս գործարանը խոշոր պատվեր է ստացել՝ պատրաստել պահեստային մասեր սովետական վիթխարի կառուցումների՝ Կույբիշևի և Ստալինգրադի հիդրոկայանների կառուցումների համար։ Գործարանի բանվորները մեծ խանդավառությամբ են կատարում այդ պատվավոր գործը։

Հայաստանում գործվող կերպասների նմուշները ցուցահանդեսում

Առաջին ցուցասրահի ձախ պատն ամբողջովին տրամադրված է Հայաստանում արտադրվող ճշգրիտ չափիչ գործիքների և ժամացույցների նմուշներին։ Այս ցուցատախտակը խոսում է մի այլ խոշոր նվաճման մասին, թե Հայաստանում որակավոր, կուլտուրական բանվորների ինչպիսի՛ կադր է ստեղծվել, որ խոշոր չափերով կարողանում ենք արտադրել այնպիսի նուրբ տեխնիկա ունեցող արտադրանք, ինչպես զանազան տեսակի վոլտմետրեր, ամպերոմետրեր, վատտերմետրեր, միլիամպերոմետրեր, ժա-

մացույցներ և այլն։ Նշանակալից է նաև այն, որ այստեղ ցուցադրված են մի քանի էլեկտրաչափիչ նուրբ գործիքներ, որոնք հանդիսանում են Հայաստանում աշխատող մասնագետների ստեղծագործ մտքի արգասիքը։ Նրանք հնարված ու պատրաստված են Հայաստանում և հավանություն են գտել ու այսօր տարածված են ամբողջ Սովետական Միության մեջ։ Հատկանշական է նաև հետևյալ փաստը. Երևանի ժամացույցների գործարանը, 1946 թվականի համեմատությամբ, մի քանի տասնյակ անգամով ավելացրել է իր արտադրանքը։ Այժմ գործարանն անցել է նոր տեսակի գեղեցիկ ու բարձրորակ ժամացույցների մասսայական արտադրությանը։

Սովետական Հայաստանի ծանր և էլեկտրո-մեքենաշինական արդյունաբերության վիթխարի նվաճումներն են ցուցադրված նաև հաջորդ դահլիճում։ Ընդարձակ ցուցասրահի կեսը տրամադրված է Հայաստանի ծանր արդյունաբերության պարծանքը հանդիսացող էլեկտրո-մեքենաշինական գործարանի արտադրանքի ցուցադրմանը՝ տարբեր չափի ու մեծության եռաֆազ հոսանքի ուժային տրանսֆորմատորներ, գեներատորներ, էլեկտրակարգավորիչ վահաններ և այլն։ Այստեղ ցուցադրված են նաև մեքենաշինական մի քանի այլ գործարանների արտադրանքները։ Ահա Մեքենաշինական գործարանի արտադրանքը՝ միկրոֆէսը, բարձր, ուղղահայաց գլանաձև մի սարքավորանք, որի ներսում պարփակված են տուրբինը, գեներատորը և էլեկտրականին անհրաժեշտ բոլոր այլ սարքավորանքները, այլ կերպ ասած՝ փոքրիկ, կուռ ամբողջական մի էլեկտրական, որը բավական է դնել մի որևէ փոքրիկ առվակի ափին, անգամ բացօթյա, և նա ջրի ուժով կաշխատի, տալով պատրաստի էլեկտրական հոսանք։ Երևանի գործարանի արտադրած միկրոֆէսները ո՛չ միայն էլեկտրական լույս են տվել Հայաստանի լեռնային շատ գյուղերի, այլև լուսավորում են Սովետական Միության բազմաթիվ այլ շրջաններ։

Դժվար է մի առ մի թվարկել բոլոր այն մեքենաները, որոնք պատրաստված են Հայաստանում և ցուցադրված են այս սրահներում։ Մի բնորոշ փաստ միայն հիշատակենք։

Սովետական Հայաստանի առաջին տասնհինգ տարվա ընթացքում, երբ խոսք էր լինում ծանր արդյունաբերության մասին, հիշում ենք, որպես օրինակ բերվում էր միայն պղնձարդյունաբերությունը։ Հաջորդ հնգամյակում պղնձարդյունաբերությանն ավելացավ խոշոր քիմիական արդյունաբերությունը, և արդեն չգիտեին դրանցից ո՞րին տալ առաջնությունը։ Իսկ հիմա՞։

Ստեղծվել է Հայաստանի ծանր արդյունաբերության բոլորովին մի նոր ճյուղ՝ մետաղամշակումն ու մեքենաշինարարությունը, և դա նախորդ ճյուղերի անընդհատ զարգացման և ընդարձակման պայմաններում։ Ո՞րին տալ այսօր առաջնությունը։ Հայաստանի ծանր արդյունաբերության մեջ ո՞րն է առաջատարն այսօր։ Պղնձարդյունաբերությո՞ւնը (որի արտադրանքն այնքան բազմազան է, որ այսօր այդ անվամբ արդեն չի կարելի կոչել, ավելի ճիշտ կլինի ասել գունավոր մետաղարդյունաբերություն), քիմիակա՞ն արդյունաբերությունը, թե՞ մետաղամշակությունն ու մեքենաշինությունը։ Երեքն էլ առաջատար են, երեքն էլ հետագա զարգացման փայլուն հեռանկարներն ունեն։

Ցուցահանդեսի հաջորդ սրահում ցուցադրված են Տեղական արդյունաբերության մինիստրության ձեռնարկությունների բազմազան արտադրանքները։ Այստեղ կան դարձյալ զանազան մեքենաներ, ամեն տեսակի տնային սարքավորանքներ, ալյումինի և այլ ամանեղեններ, ապակյա երեք նոր գործարանների արտադրանքը՝ ամեն տեսակի ապակեղեններ, Հախճապակեղենի գործարանի արտադրանքը՝ գեղեցիկ պնակներ ու ամանեղեններ, խոհանոցային սարքավորանք, հախճապակյա սալիկներ, լաքի ու ներկերի գործարանի տասնյակ տեսակի արտադրանքը, լայն սպառման առարկաների ձեռնարկությունների արտադրանքը՝ հագուստեղեն, կոշկեղեն, արհեստական կաշի, մանկական խաղալիքներ և այլն։

Արդյունաբերության բաժիններին հաջորդում է ռեսպուբլիկայի բնական հարստությունների բաժինը։ Սովետական Հայաստանի ընդերքը հարուստ է ո՛չ միայն զանազան հանքանյութերով, այլև ամենաբազմազան շինանյութերով։ Ցուցասրահներում ներկայացված են բոլոր այդ հարստությունները. Հայաստանի մարմարն իր բազմաթիվ տեսակներով, ինչպես բնական, այնպես էլ վերամշակված վիճակում, բազալտը, գրանիտը, տուֆն իր բազմերանգ գույներով, պեմզան, կապակցող շինանյութերի տեսակները և այլն։ Այդ շինանյութերի լավագույն ցուցահանդեսը մենք ամեն օր տեսնում ենք մեր վերածնված Հայրենիքի մայրաքաղաքի գեղեցիկ կառուցումների վրա, սակայն այստեղ, ամփոփ, մի տեղ հավաքված, նրանք կարծես կրկնապատկվում ու եռապատկվում են։ Դժվարանում ես հավատալ, թե այդքան շատ ու բազմազան են մեր երկրի հարստությունները, որոնք դարերով թաքնված էին

Վեճափառը թանգարանի պատմական բաժնում

երկրի ընդերքում, և այսօր միայն, սովետական մարդկանց ստեղծագործ ջանքերով, դուրս են հանված ու զարդարում են մեր քաղաքները, շրջանային կենտրոններն ու գյուղերը, մեր աշխատանքի և կուլտուրայի պալատները։ Պատերին ցուցադրված ցուցատախտակներն ու պերճախոս թվերը պատմում են այն մասին, թե ինչ խոշոր չափերով աճել է Հայաստանում շինանյութերի արդյունաբերությունը, և որ այսօր Հայաստանի քարն ու մարմարը սպառման լայն շուկա են ստացել Սովետական Հայաստանի սահմաններից դուրս՝ միութենական բազմաթիվ այլ քաղաքներում։

Մենք պատկերացնել անգամ չէինք կարող, որ նույնքան հարուստ ու բազմազան են նաև Հայաստանի անտառանյութերը։ Միայն ռեսպուբլիկայում ստեղծված լայն անտառարդյունաբերությունը ի վիճակի եղավ հայտաբերել այդ հարստությունները.

որոնց նմուշները ամենազանազան տեսակի գեղեցիկ կահույքի տեսք ընդունած՝ ցուցադրված են այստեղ։

Այնուհետև դալիս են Հայաստանի արդյունաբերության վաղուց հայտնի ճյուղերի՝ թեթև արդյունաբերության, կաթի և մսի արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի ցուցասրահները։ Սակայն ի՞նչ վիթխարի փոփոխություններ են կատարվել այդ բնագավառներից յուրաքանչյուրի մեջ։ Եթե առաջ մեր թեթև արդյունաբերության հիմնական պարծանքը հանդիսանում էր Լենինականի Տեքստիլ կոմբինատը, ապա այսօր մեր թեթև արդյունաբերությունը շատ ավելի պերճախոս ու տպավորիչ այլ նվաճումներ ունի։

Եվ նա մեզ ուղեկցում է դեպի այդ նվաճումները ցուցադրող ցուցատախտակները։ Ահա Մահուդի գործարանի արտադրած տասնյակ զանազան գույնի և երանգի բրդյա գեղեցիկ կտորեղենները, այդ թվում Հայաստանի երեսնամյակի առթիվ թողարկված առաջին գեղեցիկ մահուդ կտորը։ Ահա Մետաքսի գործարանի, Կաշվի գործարանի և կոշիկի, կարի և տրիկոտաժի գործարանների գեղեցիկ արտադրանքները։ Ահա Լենինականի նոր խոշոր Գուլպայի գործարանի տասնյակ տեսակի արտադրանքը, սկսած մանկական գուլպաներից մինչև կանացի նուրբ, ամենագեղեցիկ գուլպաների տեսակները։

— Այս գործարանի չորս օրվա արտադրանքը լրիվ բավական է ամբողջ Երևանի աղգաբնակչության գուլպաների պահանջը բավարարելու համար,— ասում է բացատրողը։

Ինչպիսի՞ հոյակապ նվաճումներ են ձեռք բերված սննդարդյունաբերության, կաթի և մսի արդյունաբերության ուղղությամբ։ Համարյա անհնար է թվարկել այդ ցուցատախտակների վրա ցուցադրված արտադրանքի այն տեսակները, որոնք այսօր արտադրվում են Սովետական Հայաստանում։ Սակայն ցուցադրված մթերքներից ավելի պերճախոս են նրանց մեկնաբանող թվերը, որոնք խոսում են այն մասին, որ չկա առդյունաբերական մի ճյուղ, ուր մի քանի անդամով ավելացած չլինեն թողարկվող ապրանքների տեսակները։ Չկա սննդարդյունաբերության կամ կաթի ու մսի արդյունաբերության որևէ մի արտադրանք, որ Հայաստանի արդյունաբերությունը յուրացրած չլինի։ Նորը և ուշագրավն այստեղ նաև ապրանքի բարձրորակ արտաքին ձևավորումն է, որը կատարված է մեծ ճաշակով և վարպետությամբ։ Հրուշակեղենի արտադրանքի գեղեցիկ տուփերի վրա մենք տեսնում ենք մեր Հայրենիքի բնության ու հոյակապ կառուցումների գեղատեսիլ նկարները, ինչպես և հայ մանրանկարչության գեղեցիկ նմուշները, նույնը ծխախոտի նոր տեսակների և օծանելիքների տուփերի վրա։

Զգալի նվաճումներով է ցուցադրված նաև Հայաստանի արհեստագործական կոոպերացիան, մասնավորապես աչքի են ընկնում ընտիր գորգերի բազմաթիվ տեսակները։ Ցուցահանդեսի արդյունաբերական բաժինները ուշադիր դիտելուց հետո լիովին համոզվում ես, որ, իրոք, Սովետական Հայաստանը վաղուց արդեն դառել է ամենաառաջավոր ինդուստրիալ (ճարտարարվեստական) երկիր, որ չկա երկրի ընդերքում հայտաբերված որևէ նյութ, որի արտադրությունը լայն չափերով ծավալված չլինի։ Եվ ապա՝ որ չկա որևէ հումք, որ որպես այդպիսին արտահանվի երկրից. ամեն ինչ վերամշակված է տեղում և պատրաստի ապրանքի ձևով է միայն արտահանվում։ Եվ երրորդ՝ Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումն այսօր ոչ միայն լրիվ չափով ապահովում է ռեսպուբլիկայի արդյունաբերական ապրանքների պահանջի զգալի մասը, այլև հնարավորություն է ստեղծել արդյունաբերական ապրանքների արտահանմանը՝ խոշոր չափերով։ Այս ամենը չի կարող ուրախության մեծ զգացմունքով չլցնել ամեն մի հայրենասերի սիրտը, չի կարող հպարտության զգացմունքով չլցնել նրա հոգին։

Պակաս պերճախոս չեն նաև ցուցահանդեսի մյուս բաժինները։ Մի հատուկ ցուցատախտակի վրա ցույց են տրված ջրաշինարարական աշխատանքները։ Ոռոգող խոշոր ջրանցքների կառուցումը ապահովում է գյուղատնտեսական նոր հզոր վերելքը, որի զարգացման թափը հետ չի մնում երկրի արդյունաբերական զարգացումից։ Հայաստանի ժողովրդական տնտեսության այդ երկու ճյուղերը համաչափ են զարգանում, որպեսզի ճեղքվածք չառաջանա արդյունաբերության և նրա հումքի բազայի միջև։ Իսկ այդ երկուսի համատեղ զարգացումը, իր հերթին, ապահովում է ժողովրդի նյութական կուլտուրական մակարդակի նոր հզոր վերելքը, որի ականատեսներն ենք հանդիսանում մենք։

Երկրի կուլտուրական խոշոր վերելքի մասին են պատմում ցուցահանդեսի մեծ սրահներից մեկում ցուցադրված էքսպոնատները։ Այստեղ նկարներով, թվերով ու ցուցակներով ցույց են տրված Սովետական Հայաստանի նվաճումները երեսուն տարվա ընթացքում արվեստի, լուսավորության, առողջապահության, հրատարակչական գործի,

ճարտարապետության և այլ բնագավառներում։ Բերենք երկու պերճախոս օրինակ միայն։ Ցուցադրված են Հայաստանի երկու մեծագիր քարտեզները, մեկի վրա կարմիր շրջանակներով ցույց է տրված ստեղծված մշտական գործող կինո-թատրոնների և կուլտ-լուս հիմնարկների ցանցը, մյուսում գունավոր քառակուսիներով՝ բուժհիմնարկների ցանցը։ Թե՛ մեկ և թե՛ մյուս քարտեզները համարյա ծածկված են այդ նշանների խիտ կետերով։ Չկա Հայաստանում շրջանային մի կենտրոն, ուր չլինի մշտապես գործող կինո-թատրոն, հիվանդանոց, ամբուլատորիա, ծննդաբերական տուն, թատրոն, ակումբ, կուլտուրայի տուն։ Ավելին. արդեն ոչ միայն շրջանային կենտրոններում, այլև առանձին գյուղերում են ստեղծված նման կետեր։ Հայաստանի մոտ երեք հարյուր գյուղ արդեն ունեն իրենց մշտական գործող կինո-թատրոններ, շատ գյուղերում ստեղծված են կոլխոզային փոքրիկ հիվանդանոցներ իրենց մի քանի հոդինոց բուժանձնակազմով։ Համարյա բոլոր գյուղերում ստեղծված են ակումբներ և գրադարաններ։

Անհնար է թվել մեր ռեսպուբլիկայի բոլոր այն նվաճումները, որոնք ներկայացված են այս ցուցահանդեսում։ Դրանք շատ են ու բազմազան։ Ցուցահանդեսը թողնում է անջնջելի տպավորություն. այնտեղից հեռանում ես՝ լցված երախտագիտական խորը զգացումով դեպի այն կարգերը, այն մարդիկ, որոնք ապահովեցին հայ Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի այսպիսի հոյակապ վերելքն ու ծաղկումը։ Եվ առաջին հերթին երախտագիտական խորը զգացումով ես լցվում դեպի այն մեծ մարդը, որը դեռ երեսուն տարի առաջ գրեց իր մարգարեական խոսքերը՝ «Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղության և ազգային վերածնունդի հնարավորություն»։

Լավ է, որ այդ խոսքերը ոսկյա տառերով գրոշմված են ցուցահանդեսի նախամուտքի ճակատին։